3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1826 -Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 2629-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի N 2629-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափազորության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05/06/2025 թվականի N Կ-05062025-08-0012 որոշում): Ներկայացվել է նոր ճշտորված չափազորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց N 29 հասցեի 186,59 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 333,1 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Վահակ Մկրտիչի Գրիգորյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 2629-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<333,1(երեք հարյուր երեսուներեք ամբողջ մեկ տասնորդական)>> թիվն ու բառերը փոխարինել <<316,36(երեք հարյուր տասնվեց ամբողջ երեսունվեց հարյուրերորդական)>> թվով և բառերով:



2025-08-19 16:26:15 GMT+4

Հավանագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1825 -Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ
N 46/4 ՀԱՍՑԵԻ 155,87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/4 հասցեի հողամասը և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վաչագան Մկրտչի Վարդանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24012022-08-0051 վկայական):

Քաղաքացի Վաչագան Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/4 հասցեի 155,87 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով Վաչագան Վարդանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մարտի 12-ին N 3476 թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/4 հասցեի 155,87 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Վաչագան Մկրտչի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
- Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-08-20 13:30:08 GMT+4
Հայկաստանի Հանրապետություն

miD

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1824 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 03-Ի N 2542-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Հրաչյա Ղազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 24-ին N 10388 թվագրմամբ)՝ որոշում եմ.

- Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի սեպտեմբերի 03-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վարպետաց փողոց N 101 հասցեում գտնվող շենքի նկուղային հարկից առանձնացված 55,58 քառակուսի մետր մակերեսով տարածքը քաղաքացի Հրաչյա Հրաչի Ղազարյանին վարձակալության տրամադրելու մասին» N 2542-Ա որոշումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հրաչյա Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025-08-20 13:41:35 GMT+4
Համախմբված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1823 Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿՈՒՇ ՍՏԵՓԱՆԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՁՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N 295 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 19.93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հայկուշ Ստեփանի Ղամբարյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ N 9084 տրված 11.12.2023թ.) Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 295 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 19.93 (տասնինն ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը: Քաղաքացի Հայկուշ Ստեփանի Ղամբարյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով քաղաքացի Հայկուշ Ստեփանի Ղամբարյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի սեպտեմբերի 19-ին N 15878 թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Ճանաչել քաղաքացի Հայկուշ Ստեփանի Ղամբարյանի (ծնված 1965 թվականի հոկտեմբերի 11-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 295 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 19.93 (տասնինն ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հայկուշ Ստեփանի Ղամբարյանի լիազորված անձ Արտյոմ Հարությունի Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
- Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



2025-08-20 13:21:51 GMT+4
Հանրապետական էԼԵԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » *օգոստոսի* 2025 թվականի N 1822-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՊՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՊՈՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անդրանիկ Հովհաննեսի Մադոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ «Ամենափրկիչ» եկեղեցու հարակից տարածքի բարեկարգման պատճառով տեղահանված տաղավարը վերատեղադրելու նպատակով այլ հոամաս տրամադրելու խնդրանքով, քանի որ դադարեցվել է նրա ձեռնարկատիրական գործնեությունը:

Նկատի ունենալով վերոհիշյալ և քաղաքացի Անդրանիկ Մադոյանին ձեռնարկատիրական գործնեությունը շարունակելու նկատառումով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 205-Ա որոշումը և քաղաքացի Անդրանիկ Հովհաննեսի Մադոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 04-ին N 10916 թվագրմամբ)՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Անդրանիկ Հովհաննեսի Մադոյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31072025-08-0018 վկայական) Գյումրի քաղաքի Շ.Ռուսթավելու փողոցի N 63/5 հասցեի 19,54 (տասնինն ամբողջ հիսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով (կադաստրային ծածկագիր 08-001-0732-0200) բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 30 (երեսուն) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 105516 (մեկ հարյուր հինգ հազար հինգ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):
3. Ժամանակավոր տաղավարի տեղադրման համար մեկամսյա ժամկետում սահմանված կարգով դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ներկայացնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և ստանալ տաղավարի տեղադրման թույլտվություն: Նախագծով սահմանված ժամկետում ավարտել ժամանակավոր տաղավարի տեղադրման աշխատանքները և շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:
4. Քաղաքաշինական նպատակներով համայնքի կարիքների համար օգտագործելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հողամասը ենթակա է վերադարձման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով, առանց որևէ փոխհատուցման և այլ հողամասի տրամադրման:
5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը կատարել քաղաքացի Անդրանիկ Հովհաննեսի Մադոյանի միջոցների հաշվին:

6. Առանց հաստատված նախագծի և շինարարության թույլտվության ժամանակավոր տաղավարը տեղադրելու դեպքում որոշումը համարել անվավեր և մեղավորներին օրենքով սահմանված կարգով ենթարկել վարչական պատասխանատվության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Հովհաննեսի Մադոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature

2025-08-21 12:47:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոս 2025 թվականի №1821 Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՅՈՒ
ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 126.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0186-0006-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 126.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0186-0006-ից) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 2/3 հողամաս



[Handwritten signature]

2025-08-20 11:58:16 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 էլ. փոստը gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1820 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 39.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 115.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (92.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բորյան փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 39.8(երեսունինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված է 115.86(մեկ հարյուր տասնհինգ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (92.38(իննսուներկու ամբողջ երեսունուրեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնական կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնական կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023R7LNZU ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Բորյան փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 39.8(երեսունինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված 115.86(մեկ հարյուր տասնհինգ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (92.38(իննսուներկու ամբողջ երեսունուրեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Նարեկ Մկրտչի Սիմոնյանին:

3.Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



[Handwritten signature]

2025-08-19 13:03:37 GMT+4
 Հաղթանակած է էԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N1819

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի N1264-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի «Քաղաքացի Զաբել Սամսոնի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Բարոնյան փողոց N5 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 104.02 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 238.83 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1264-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած անճշտության պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի «Քաղաքացի Զաբել Սամսոնի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Բարոնյան փողոց N5 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 104.02 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 238.83 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1264-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետում <<Քաղաքացի Հակոբի Բաղդասարովի>> բառերը փոխարինել <<Զաբել Սամսոնի Հակոբյանի >> բառերով

2) որոշման նախաբանում և 2-րդ կետում 283.83 (երկու հարյուր ութսուններեք ամբողջ ութսուններեք հարյուրերորդական) թվերը և բառերը փոխարինել 238.83 (երկու հարյուր երեսունութ ամբողջ ութսուններեք հարյուրերորդական) թվերով և բառերով



[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-08-20 13:36:44 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1818

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԱՄԲԱՐՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ N32/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱՍՏՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 71.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Տիգրան Դերենիկի Ամբարդարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց 2-րդ նրբանցք N32/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 71.9 (յոթանասունմեկ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինություններ:

Քաղաքացի Տիգրան Դերենիկի Ամբարդարյանի լիազորված անձ Սարգիս Մանասյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 18052022-08-0035 վկայականը, քաղաքացի Տիգրան Դերենիկի Ամբարդարյանի լիազորված անձ Սարգիս Մանասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N20045 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Քաղաքացի Տիգրան Դերենիկի Ամբարդարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելու փողոց 2-րդ նրբանցք N32/2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 71.9 (յոթանասունմեկ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:



[Handwritten signature]

2025-08-20 13:19:54 GMT+4

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1817 Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ
ՓՈՂՈՑ 8/44 ՀԱՅՅԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 8/44 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Յուսիկ Սամվելի Հովհաննիսյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2512098 վկայական):

Քաղաքացի Յուսիկ Սամվելի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 8/44 հասցեի 89,86 (ութսունինն ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի մի մասի՝ 16,81(տասնվեց ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով և 22,22 (քսաներկու ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի», հիմք ընդունելով քաղաքացի Յուսիկ Սամվելի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 24-ին N 10413 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել քաղաքացի Յուսիկ Սամվելի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 8/44 հասցեի 16,81(տասնվեց ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի և 22,22 (քսաներկու ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես՝ առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Յուսիկ Սամվելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Handwritten signature

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
2025 թ. ք.Գյումրի

2025-08-20 13:32:42 GAT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1816 Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՋԱ ՎԱՂԱՐԶԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ԾՆՆՂԱՏԱՆ ՓՈՂՈՑ N 35 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 235.29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 126.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ N 1424 տրված 09.03.2023թ.) Գյումրի քաղաքի Ծննդատան փողոց N 35 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 126.75 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 235.29(երկու հարյուր երեսունհինգ ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանի լիազորված անձ Իրինա Միշայի Սիմոնյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերմիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023XPAZSR ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանի լիազորված անձ Իրինա Միշայի Սիմոնյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 12-ին N 11500 թվագրմամբ)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծննդատան փողոց N 35 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 235.29(երկու հարյուր երեսունհինգ ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

2.Ճանաչել քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանի(ծնված 1949 թվականի օգոստոսի 17-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ծննդատան փողոց N 35 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 126.75 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Միշա Վաղարշակի Ղազարյանի լիազորված անձ Իրինա Միշայի Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Handwritten signature

2025-08-20 16:39:11 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳԻ կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
 Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1815 Ա
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ
 ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 197.6 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
 ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ 148.27 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ
 (118.19 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 197.6(մեկ հարյուր իննսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված է 148.27(մեկ հարյուր քառասունութ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (118.19(մեկ հարյուր տասնութ ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնական կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնական կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023CVEV5J ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 197.6(մեկ հարյուր իննսունյոթ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված 148.27(մեկ հարյուր քառասունութ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (118.19(մեկ հարյուր տասնութ ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Երվանդ Վոլոդյայի և Ազատուհի Հրաչիկի Հովհաննիսյաններին:

3.Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-08-20 13:38:16 GAT-4
 Շտամպված է էԵՆԳ-ի կոդով:



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոս 2025 թվականի №1814 Ա
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 11/24 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №01082025-08-0001) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հմայակ Մինասյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11594 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Շիրակացու փողոց 11/24 արտադրամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №01082025-08-0001) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) 985.8 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 11/24 արտադրամաս

2) 337.3 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 11/35 հողամաս

3) 652.9 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 11/36 հողամաս

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ



2025-08-16 11:20 GMT+4
Հավանական է, որ հեղինակը կողմից

miD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոս 2025 թվականի №1813 Ա
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Լ. ՄԱՂՈՅԱՆ ՓՈՂՈՑ 13 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1319-0007) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ
ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ազատ Սարոյանի լիազորված անձ Արշակ Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11218 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՒՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Լ. Մաղոյան փողոց 13 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-1319-0007) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) 202.61 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Լ. Մաղոյան փողոց, 13 բնակելի տուն

2) 135.6 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Լ. Մաղոյան փողոց, 13/1 բնակելի տուն



ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ
2025 թ. ք. Գյումրի

2025-08-20 16:24:04 QNT-4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ԿՈՐԹԵԶ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 20 » օգոստոս 2025 թվականի № 1812 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՂԱՆՂԻՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 28.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ 28.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 12-ի №1710-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ. Ղանդիյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 28.7 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին եվ դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 28.7 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիյան փողոց, 51/26 ավտոտնակ



Handwritten signature

2025-08-20 16:36:14 GMT+4
Հայաստանի Հանրապետության Գյումրի կոդմից



ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1811-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՆԹԱԽՄԲԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին>> N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին և 2-րդ ենթախմբերի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2025 թվականի սեպտեմբերի 23-ին ժամը 11:00-ին՝ համաձայն NN 1, 2 հավելվածների:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարությունների հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2025-08-20 15:57:11 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳԻ կողմից

miD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 20 >> օգոստոս 2025 թվականի N 1810 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՇՈՒՌԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Շուրիկ Հայկի Հակոբյանի նկատմամբ կիրառել խրախուսանք միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն մեջ է մտնում Շուրիկ Հայկի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1809 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2007
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1741 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հինք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 2025 թվականի հունիսի 14-ի թիվ 2/623-2025 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ տաղավարը տեղահանվել է Գյումրու համայնքապետարանի կողմից Հաղթանակի պողոտայի վերակառուցման նպատակով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի սեպտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Աղունիկ Հարությունյանին /ծնվ.15.06.1988թ. անձնագիր AG 0354840 016/ ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով 10.0 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1741 որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2007 թվականի նոյեմբերի 12-ի (գրանցված սեղանամատյանում N 8471) թիվ 30 պայմանագիրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



[Handwritten signature]

2025-08-20 11:19:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » օգոստոս 2025 թվականի N 1808 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1521 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հինք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 2025 թվականի հունիսի 14-ի թիվ 2/623-2025 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ տաղավարը տեղահանվել է Գյումրու համայնքապետարանի կողմից Հաղթանակի պողոտայի վերակառուցման նպատակով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի հուլիսի 28-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Աննա Մարտիրոսյանին առևտրի և սպասարկման տաղավար տաղավար տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 1521 որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2008 թվականի հոկտեմբերի 06-ի (գրանցված սեղանամատյանում N 6886) թիվ 159 պայմանագիրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



Handwritten signature

2025-08-20 11:18:45 GMT+4
Հայկանտված է էԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» օգոստոս 2025 թվականի N 1807 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1470-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

